ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/12

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պարենային սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Դամբայ» ՍՊԸ-ի կողմից 19.04.2019թ. ներկայացված (22.04.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/12 բողոք), որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ, պարզեցի հետևյալը.

1. **<u>«Դամբայ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Դամբայ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 19.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ ՊՆ կարիքների համար պարենային սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել «Դամբայ» ՍՊԸ-ն և «Էմ Դի էյջ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի դեռևս 27.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Դամբայ» ՍՊԸ-ն:

Իսկ նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Վերոնշված արձանագրությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է 02.04.2019թ. և մինչ օրս գնահատող հանձնաժողովը «Դամբայ» ՍՊԸ-ին չի ծանուցել ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հաավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 1 ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման նիստի

արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:

Կարգի 43-րդ կետի 4 ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ՊՆ կարիքների համար պարենային սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգին հայտեր են ներկայացրել «Դամբայ» ՍՊԸ-ն և «Էմ Դի էյջ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 27.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 3 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Դամբայ» ՍՊԸ-ն և նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկելով ներկայացնել ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Վերոնշված արձանագրությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է 02.04.2019թ. և մինչ օրս գնահատող հանձնաժողովը «Դամբայ» ՍՊԸ-ին չի ծանուցել ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հաավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Փաստորեն ստացվում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի բացման և առաջին տեղ զբաղեցնող մասնակից որոշելու նիստին (27.03.2019թ.) հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով չի ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Դամբայ» ՍՊԸ-ին, և չի առաջարկել ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչով խախտել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Ընկերությունը հայտնել է, որ մինչև բողոք ներկայացնելու օրը «Դամբայ» ՍՊԸ-ի ղեկավարությունը փորձել է ստանալ տեղեկություն մոտ 20 օր ՀՀ ՊՆ-ի կողմից «Դամբայ» ՍՊԸ-ին հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հաավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին ծանուցում չներկայացնելու վերաբերյալ՝ սակայն ապարդյուն:

Ընկերությունը գտնում է, որ նման պայմաններում, երբ գնահատող հանձնաժողովը, կարծես թե միտումնավոր, չի ծանուցում որակավորման փաստաթղթերի ներկայացնելու առաջարկը, որով թույլ է տալիս «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթների խախտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները /անգործությունը/ և որոշումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին էլեկտրոնային փոստի միջոցով անհապաղ ծանուցել 3-րդ չափաբաժնի

մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Դամբայ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով վերջինիս ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 23.04.2019թ. գրությամբ խնդրել է առանց քննության թողնել բողոքը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 22-րդ, «Դամբայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը համարվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ:

«Դամբայ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.04.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.04.2019թ. թիվ ՊՆ/02/1/1/400-2019 գրությամբ հայտնել է, որ 02.04.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Դամբայ» ՍՊԸ-ն:

02.04.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրապարակվել են նիստի արդյունքները, «Դամբայ» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների, ինչպես

նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Դամբայ» ՍՊԸ-ն ներկայացրել է Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, իսկ 05.04.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չուներ, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջներն առկա էին, ուստի 18.04.2019թ., հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Դամբայ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունները համարվել են իրականությանը համապատասխանող, և վերջինս ճանաչվել է ընտրված (հաղթող մասնակից):

18.04.2019թ. գնահատող հանձնաժողովը որոշել է հաստատել Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.04.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դամբայ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Դամբայ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Դամբայ» ՍՊԸ-ն 18.04.2019թ. ճանաչվել է ընտրված մասնակից և www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Դամբայ» ՍՊԸ-ի կողմից 19.04.2019թ. ներկայացված բողոքը որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ, ՀՀ պաշտպանության նախարարության 26.04.2019թ. թիվ ՊՆ/02/1/1/400-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դամբայ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Դամբայ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով:

«Դամբայ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է, որ իրեն առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելուց հետո, Ընկերությանը չի ծանուցվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, որի հետևանքով գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Սակայն, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության՝

- 1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

05.04.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված պահանջներն առկա են, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող.

- 1.2 կետի համաձայն՝ 18.04.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, հանձնաժողովը որոշեց Ընկերության

որակավորման չափանիշները գնահատել ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող և Ընկերությանը հայտարարել ընտրված մասնակից:

Արձանագրում եմ, որ 18.04.2019թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով «Դամբայ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ նման պայմաններում բացակայում է «Դամբայ» ՍՊԸ-ի 19.04.2019թ. բողոքով ներկայացված վեճի առարկան, իսկ բողոքով ներկայացված պահանջն առարկայազուրկ է: Հետևաբար գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Դամբայ» ՍՊԸ-ի կողմից 19.04.2019թ. ներկայացված բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**